

ԳՅՈՒԴԱՏԵՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՅՈՒՆ

Է. Ա. ՄՈՐԹԻՉՅԱՆ

ՆԻՐԱՆԵՆՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒԹՁԲ

Ծիրանենին մշակության մեջ հայտնի է շատ վաղուց նրա հայրենիքի վերաբերյալ գրականության մեջ կա երկու կարծիք: Բայց Պլինիուս Ավագի [1], Ժ. Բ. Լամարկի [2], Ղենդ Ալիշանի [3] պտղատու արդ տեսակի հայրենիքը Հայաստանն է: Գրան Հակառակ Օ. զը Կանդոլի [4], Կ. Ֆ. Կոստինայի [5], Պ. Մ. Ժուկովսկու [6] և ուրիշների համոզմամբ ծիրանենին շինական և միջինասիական ծագում ունի: Վերջիններս հենվում են այս փաստի վրա, որ ծիրանենին շինական գրականության մեջ հիշատակվել է մեր թվարկությունից 2000 տարի առաջ, և այստեղ մինչև այժմ պահպանվել են այդ կուտարայի վայրի ձեերը: Հիշյալ ևնթագրությունները հերթում են վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի տարածքում կատարված հնագիտական պեղումների նյութերով, պատմական գրականության ավալներով և ծիրանենու գծով կատարված գիտահետազոտական աշխատանքներով:

Այսպես, վերջերս Բ. Ն. Առաքելյանը [7] Գառնիի պեղումների ժամանակ հայտնաբերել է ծիրանի կորիզներ, որոնք ունեն 6000 տարվա հնություն: Հենց միայն այս փաստով Հայաստանում ծիրանենու մշակության ժամանակաշրջանը Զինաստանի համեմատությամբ 2000 տարով առաջ է ընկնում: Բացի այդ, 1975 թվականին Արագած լեռան հարավային լանջերում՝ Ամրերդ գետի ձորում հայտնաբերվել են վայրի ծիրանենիներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր թվականությունից առաջ, դեռևս շորորդ հազարամյակում Հայաստանը ունեցել է զարգացած պտղաբուծություն: տարածված են եղել խնձորենին, տանձենին, ծիրանենին, զեղձենին, շլորենին, ընկուզենին, նշենին, նռնենին, թթենին: Ժամանակակից երկրաբանական դարաշրջանի սկզբում ստեղծվել են Հայաստանի երկրագործական առաջին օջախները: Երկրագործական կենարուններ են դարձել Արարատյան դաշտը, Արագածոտն գավառը, Արածանիի հովիտը, Հայոց ձորը:

Հայաստանի զարգացած պտղաբուժյան մասին բազմաթիվ տվյալներ կան ասորական, հոմական, հայկական սեպագիր արձանագրություններում, ձեռագիր և հնատիպ գրավոր աղբյուրներում:

Հայաստանի զարգացած պտղաբուժյան մասին բազմաթիվ հիշատակություններ կան նաև հայ մատենագիրներ Ագաթանգեղոսի [8], Մովսես Խորենացու [9], Անանիա Շիրակացու [10], Միհիթար Գոշի [11] և այլոց աշխատություններում:

Հայաստանում սկսած նեոլիթից մինչև մեր օրերը Արարատյան դաշտում, պատմական Արագածոտն, Կոտայք, Նախիջևան, Սյունիք, Պարսկահայք, Վայոց ձոր և այլ գավառներում պտղատու ծառերի մեծ մասը (40-50% -ը) զրաղեցնում էր ծիրաններին: Այն մշակվում էր առանձին «ծիրանուտների» ձևով կամ մյուս պտղատու տեսակների հետ խառը:

Ծիրաններին որպես բուսաբանական միավոր պատկանում է վարդագիրների Rosaceae ընտանիքին՝ ծիրաննու Armeniaca ցեղին: Այս անվանումը գոյություն ունի շատ վաղուց: Հստ Ռ. Իշխանյանի [12] Հայաստանի հարևան ժողովորդներ՝ ասորեստանցիները, բարելացիները, արամեացիները մեղնից 6000 տարի առաջ ծիրաններուն անվանել են արմենացիները միավոր հայկական պտուղ: Գրականության մեջ այս անվանումը հիշատակել է Պլինիուս Ավագը [1]:

Ծիրաննու ցեղը որպես սիստեմատիկ միավոր առանձնացրել է ֆրանսիացի բուսաբան Տուռնեֆորը [14]: Հետագայում Կարլ Լիննեյը [15] այն միացնելով սալորենու հետ, ընդհանուր անոնով կոչել է բրուս արմենաց (հայկական սալոր): Ավելի ուշ Ժ. Բ. Լամարկը [2] ծիրաննու մշակովի տեսակն անվանել է Armeniaca vulgaris (սովորական ծիրաննի):

Ծիրաններին հետագայում տարածվում է այլ երկրներում: Այսպես, մ.թ. II դարում հտալիայից անցել է Հոմաստան, 800 թվականին՝ Ֆրանսիա, 1524-ին՝ Անգլիա, 1654-ին՝ Ռուսաստան, 1720-ին՝ Ամերիկա, 1750-ին՝ Աֆրիկա:

Այժմ ծիրաններին մշակվում է երկրագնդի հարավային գոտու մի քանի շրջաններում: Հայաստանում աճում է ծովի մակերեսույթից 600—1800, Տաշիկստանում՝ 300—1000, Ուզբեկստանում՝ մինչև 1600, Զինաստանում՝ մինչև 2000 մետր բարձրության վրա, ընդգրկելով երկրագնդի հյուսիսային լայնության 35—50, որոշ վայրերում մինչև 61 աստիճանը:

Ծիրաններին դասվում է ամենաքիչ տարածված պտղատու տեսակների շարքը: Ամբողջ աշխարհում նրա մշակությունները հասնում են 330 հազար հեկտարի, իսկ տարեկան արտադրանքը՝ մեկ միլիոն 330

Հազար տոննայի Այժմ այդիների տարածություններով առաջին աեղբ գրավում է ՍՍՀՄ-ը, ապա ԱՄՆ-ը, Հունգարիան, Չինաստանը, Մոռմինիան, Պակիստանը, Հարավսլավիան, Չիխոսուլվակիան և այլն:

Միքանենին Հայաստանում մշակվող ամենահիմնական և առաջարար պատառու տեսակն է: Նրա արդյունաբերական այդիները հիմնականում կենտրոնացված են Արարատի, Արաւաշատի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արավանի, Աշտարակի, Նախիթի, Թալինի, Եղեգնաձորի շրջաններում: Փոքր տարածություններով այդիներ կան նաև Մասիսում, Աղդրեկովում, Մեղրիում, Գափանում, Գորիսում, Միսիանում, Գուգարքում, Թումանյանում, Նոյեմբերյանում, Շամշադինում, Խչեանում: 1986 թվականին ծիրաններու այդիները հանրապետությունում դրագեցնում էին 8200 հեկտար: Դրանցից տարեկան ստացվում է 25—30 հազար տոննա բերք, որը կազմում է պատառու բոլոր տեսակների արտադրության 20—25 տոկոսը: Հեռանկարում այդ կուլտուրայի այդիների տարածությունները կհացագին 14—15 հազար հեկտարի:

Հայաստանում այժմ հայտնի են ծիրաններու 50 սորտեր, որոնք բոլորն եւ առաջացել են սովորական ծիրաններոց: Տեղական ծիրաններից տարածված են նախիչների, Երևանի, Արարատի, Սաթենի, Խոսրովինի, Կանաչենի, Նուշի, Դեղնանուշ, Կարմրենի, Օրդուրադի, Արագածի, Համբան, Ղեռնդի սորտերը:

Միքանենու ծագման հարցերի պարզաբանման համար, բացի հնագիտական, պատմագրական բնույթի նյութերի հավաքումից և արժեքավորումից, մենք կատարել ենք նաև փորձնական աշխատանքներ: Սովորական ծիրաններու (Aptenocaca vulgaris Lam.) աշխարհագրական-բուսաբանական տարրերի խմբերի սահմաններում կատարվել են խաչասերումներ: Դրանցից և ազատ փոշոտումից ստացված սերմերը ցանվել են համապատասխան դաշտում: Սերմնարույսերի ծլումից մինչև նրանց 115 տարեկան հասակը կատարվել են շուրջ 3000 բույսերի բուսաբանական, կենսաբանական և տնտեսական հատկանիշների համապատասխան ուսումնասիրություններ, դիտվել է նրանց փոփոխականության ընթացքը:

Մագման հարցերի ուսումնասիրության համար հայկական ծիրաններից օգտագործվել են Երևանի, Սաթենի, Կանաչենի, Խոսրովենի, Համբոն, Ղեռնդի, միջինասիականներից՝ Ախորի, Արդամի, Խաֆարակի, Սուպիսանի, Կենաչար, Ելբուպականներից՝ Կրասնաշչոկի, Լուփեն, Վենդերսկի, Օվերնսկի սորտերը: Ազատ փոշոտումից ստացված սերմերը վերցվել են մեկուսացված օջախներից: Ալսինքն, խաչաձև փոշոտման հնարավորությունը բացառելու նպատակով դրանք ընտրվել են

այնպիսի վայրերից, որտեղ տվյալ խմբից բացի մյուսներին պատկանող ծիրաններու չկան:

Մագման հարցերի պարզաբանման համար կատարված սելեկցիոն-գննետիկական ուսումնասիրություններից պարզվում է, որ յուրաքանչյուր խմբից ստացված սերունդն իր անհատական զարգացման ընթացքում կրկնում է միայն տվյալ խմբին բնորոշ ժառանգական հատկանիշներ: Այսինքն, հայկական խմբի ցանքերից ստացվել են հայկական, միջինասիրականներից՝ միջինասիրական, ևվրոպականներից՝ եվրոպական խմբերին բոլոր հատկանիշներով նմանվող սերունդ: Սա նշանակում է, որ ծիրաններու յուրաքանչյուր խումբ առաջացել է իր տեղում: Նշենք, որ փորձարկված բոլոր խմբերից ամենից շատ կուլտուրական հատկանիշներ դրսեորել են հայկական ծիրանները: Այդպիսի դեպքերի կապակցությամբ լամարկը [2, էջ 10—11] ասում է. «Այն սկզբնական էակները, որոնք առաջացել են ավելի հեռավոր ժամանակներում, կարողացել են անցնել օրգանական աշխարհի առաջադիմության սանդուղքի բոլոր աստիճանները և հասնել հորինվածքի այն ամենաբարձր աստիճանին, որի վրա նրանք գտնվում են այժմ»: Ապացույցը մյուս խմբերի համեմատությամբ հայկական ծիրաննենիների ծառերի, տերեների, պտուղների արտակարգ խոշորությունն է, գեղեցկությունը, արտադրանքի բարձրորակ հատկանիշները:

Այսպիսով գալիս ենք այն եզրակացության, որ դրանք ավելի հնագույն ծագում ունեն: Այսինքն, Հայաստանը ծիրաններու ամենահնագույն օջախներից մեկն է կամ նրա իսկական հայրենիքը:

Э. С. МОРИКЯН

К ВОПРОСУ О РОДИНЕ АБРИКОСА

Р е з ѿ м е

О родине абрикоса в литературе существуют два мнения. По мнению одних родиной абрикоса является Армения, другие же считают Китай и Среднюю Азию. Последние за основу принимают то, что за 2000 лет до н. э. абрикос упоминается в китайской литературе. Указывают также на дикие формы абрикоса, которые сохранились там до сих пор. Исследования же последних десятилетий подтверждают первое мнение.

При археологических раскопках Гарни и Шенгавит выявлены семена абрикоса, имеющие 6000-летнюю давность, а в Аштаракском районе был выявлен дикий абрикос. В 1968—1986 гг.

экспериментально изучены вопросы происхождения. Были использованы армянские, среднеазиатские, европейские экогруппы абрикоса. Изучение ботанических, биологических и хозяйственных особенностей гибридов абрикоса показало, что при внутригрупповой гибридизации были получены поколения характерные для данной группы. Это свидетельствует о том, что Армения, Средняя Азия и Европа являются отдельными очагами возделывания абрикоса.

Гибридное поколение, полученное из армянских абрикосов по степени эволюции стоит выше, чем полученные из среднеазиатской и европейской групп. По всей вероятности, те сорта, которые наделены более культурными свойствами, имеют давнее происхождение. Следовательно, Армения является древнейшим очагом или родиной абрикоса.

ԿՐԱԿԱՆ ԲԻԲԼԻՅ

- 1 *Plinius. Naturalis historie*, Lip, 1892.
- 2 Ламарк Ж. Б. Философия зоологии. Избранные произведения, т. 2, М., 1959.
- 3 Ավշաբ Վենդ. Հայ բուսական գինետիկ, 1895,
- 4 Decandol A. Origine de plant, Paris, 1855.
- 5 Костина К. Ф. Абрикос, М.—Л., 1935.
- 6 Жуковский П. М. Культурные растения и их сородичи, Л., 1964.
- 7 Аракелян Б. Н. Гарин, Ереван, 1954.
- 8 Ազարանցիս, Պատմոթյուն Հայոց, Թիֆլիս, 1914:
- 9 Մավսի Խուենացի, Պատմոթյուն Հայոց, Երևան, 1968:
- 10 Անանիս Երշակացի, Մատենադրոթյուն, Երևան, 1979:
- 11 Միքրա Գոշ, Առակներ, Երևան, 1951:
- 12 Իջևանյան Ա., Միքան, Արմանու, Արմենիական, Դրական թերթ, № 17, 22 ապրիլի, 1983:
- 13 Turnefort J. Rei herbarie, Paris, 1700.
- 14 Linne C. Species plantarum, Paris, 1753.